

դեանցը Էջմիածնից նախ Պոլիս է գնացել, Նթէ պարոնին չալոնի աղբիւրն, որի վրայ հիմնուած է, Յովհաննէս քահանայ Մկրեանի կազմած կենսագրութիւնն է, պարզ է ուրեմն, որ ալդ խօսքերով նա մեղանշուած է և աղբիւրի դէմ Յիշեալ կենսագիրն, ընդհակառակն, կարծում է որ նա, Թաղիադեանցը Էջմիածնից ուղղակի Նոր Զուղա է գնացել (էջ 91) և ոչ կ. Պոլիս, որ եկել է միայն 1838 թւին. «Մեսրոպը կը ժամանէ ի կ. Պոլիս լամին 1838 մալիս ամսուն, որ արեւն պարրիարք Լր Տէր Ստեփաննոս... վերաձախեալն Աղաւնի» (էջ 98):

Աւաքանով վերջացնում ենք մեր խօսքը. ըստ որում չենք կամենում կանգ առնել պ. գրախօսի մի քանի սխալ հալեացքների և անճիշտ ըմբռնումների վերաւ. դորա մասին կալ ընթերցողների դատաստան.

Ա. Ե.

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

Նամակագրի դիմումը «ընթերցողների դատաստանին» ընդդիմախօսի կողմից լուծեան տրւած կէտերի վերաբերմամբ նախ ենթադրել է տալիս աչն թէ, Ա. Ե.-ի կարծիքով, ալդ «մի քանի սխալ հալեացքները և անճիշտ ըմբռնումները» իբր թէ աչնքան ակնյալոնի են որ ամեն ընթերցող կը նկատի. և ապա «ընթերցողների դատաստանին» դիմելը «անյայտ» թողած կէտերի վերաբերմամբ զգացում է իբր մի արեւրաձգութիւն դրախօսի ոչ միայն հասկացողութեան ալ և բարեխղճութեան վրալ: Գրականութիւնը աղպիսի լախուռն պարսաւներ չի սիրում. բալց ալդ հանգամանքը սորիպում է մեզ աւելի երկարաբան լինել: Շտապում ենք անցնել մեզ առաջադրած երեք չալոնի կէտերին:

Կէտ 1: Մեր գրախօսականի մէջ, վերաբերեալ պ. Ներիցեանի գրքից փոխառնելուն, ծանրութեան կէտը դրւած էր աչն բանի վրալ, որ Շահխաթունեանցի կենսագրութեան համար, մեր կարծիքով, հարկ չկար պատմել իւր բոլոր ընդարձակութեամբ աչն իրողութիւնները, ուր Շահխաթունեանցը անձնապէս երկրորդական դեր է կատարում՝ կամ բնաւ դեր չի կատարում, հետեապէս շեղումներ են և ոչ բուն առարկային (Շահխաթունեանցի կենսագրութեան) վերաբերող, մանաւանդ որ ալդ իրողութիւններից ոմանք արդէն յայտնի են պ. Ներիցեանի Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն գրքից: Արիտապէս և պիտիպոսը, ուրեմն, նկատում էինք մենք, ոչ միայն շեղումներ է անում, ալ և ալդ շատ ընդարձակ շեղումների մէջ պատմում է մի ալ հեղինակի գրքից արդէն յայտնի իրողութիւններ: Ահա մեր գրած և Ա. Ե.-ի ակնարկան փողերի գլխաւոր իմաստը: Եւ ամենից առաջ պէտք էր իմաստից բռնել: Մեր գրածի իմաստը կը պարզէր, Ա. Ե.-ին աչն, ինչ որ բաւականաչափ որոշ էր վերը ակնարկած փողերի մէջ: Սակայն ահա մեր խկական խօսքերը:

...«Ներկայ դէպքում աղքատն ընդարձակ չեղումներով անհրաժեշտութիւնը մեզ համար ակնկալորնի չեղաւ, նամանաւանդ որ գրքի մի փեղում դժար համար հարկաւոր է եղել վերապատմել և նուէն իսկ արտադրել պ. Ներիցեանի «Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն» գրքից մի քանի տասնեակ էջեր (որես գրքի էջ 51—102 և չափկապէս էջ 70—102)»:

Ի զիմաց ալն հերքումի, որ անում է Ա. Ն.-ն իւր նամակում ալդ կէտի վերաբերմամբ, ուր նա բնաւ ուշադրութեան չի առնում մեր փողերի զըլխաւոր խնամքը, մենք մեր գրախօսականի վերոյիշեալ փողերը կարող ենք ուղղիւ միմիալն աւսպէս:

...Ներկայ դէպքում աղքատն ընդարձակ չեղումներով անհրաժեշտութիւնը մեզ համար ակնկալորնի չեղաւ, նամանաւանդ որ գրքի մի քանի տասնեակ էջերում հարկաւոր է եղել նորից պատմել այն, ինչ արդէն յայտնի էր պ. Ներիցեանի «Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն» գրքից (որես գրքի էջ 51—94) և նուէն իսկ ընկարծակ արտատպումներ անել այդ գրքից (որես չափկապէս գրքի էջ 70—94):

Նա իրաւ, բաց ենք անում գրախօսւած գրքի էջ 51, ուր չօշափւում է էջմիաձնի միաբանների բողոքի խնդիրը ընդդէմ Յովհ. Կաթող. Կարբեցու, որը սկսւում է Վրիգոր արքեպիսկոպոս Արզլինցու սոսկական բողոքագրով Կարբեցու դէմ. ալս բողոքագիրը, որը ոչ մի կերպ չի վերաբերում Շահաթունեացի կենսագրութեան, դուած է գրքի էջ 52—56: Արդ, ալդ նուէն բողոքագիրը, թէև աշխարհաբար թարգմանութեամբ, գրնում ենք Ներիցեանի վերը լիշւած 2-րդ հատորի 161—164-րդ էջերում: Ապա գրախօսւած գրքի էջ 56—69 դուած է ութ միաբանների բողոքագիրը Կարբեցու դէմ: Բալց ալդ նուէն, միալն աշխարհաբար թարգմանութեամբ, փպւած է պ. Ներիցեանի գրքի էջ 165—178:

Այսպիսով ուրեմն, գրախօսւած գրքի 51—69-րդ էջերում դուումէն-դալն ևղանակով պարմած իրողութիւնները յայտնի էին ընթերցողներին պ. Ներիցեանի գրքից: Ալդ ենք կամեցել ասել վերապատմել խօսքով, որ վերը շոկեցինք «նորից պարմել» խօսքով, որովհետև առաջինով կարող էր հասկացւել թէ Արիստ. եպիսկոպոսը ոչ միալն նուէն դէպքերն է պարմում ինչ արդէն Ներիցեանն արել է, ալ ուր ալդ 51—69 էջերում ևս հեղինակը իւր թէ Ներիցեանի գրքից է օգտւել խօսքով: սա է, որ նուէն ալդ էջերում Արիստակէս եպիսկոպոսը ան զոկումներների բնագիրներն է հրատարակում, որոնք աշխարհաբար թարգմանութեամբ արդէն չափունի էին ընթերցող հասարակութեան պ. Ներիցեանի գրքից: Մենք հարկ չենք համարել մեր գրախօսականի մէջ ալդ հանգամանքը չեղել ալն պարմաւում, որ Արիստակէս եպիսկոպոսի գրքի ալդ էջերում հրատարակած բնագիր դուումէնները Շահաթունեացին վերաբերեալ ոչ մի նոր բան չեն պար-

զուտ քան ինչ պարզեւ էր նոցա աշխարհաբար թարգմանութիւնից պ. Նրիցեանի գրքում:

Չնայած դորան՝ ինքն ըստ ինքեան անարժէք բաներ չենք համարել թէ ալդ և թէ ալլ զոկումէնորները, որոնց առիթով գրել էինք՝ «Ալդ կորոնները, շատ կարևոր 19-րդ դարի Հալոց հոգեորականութեան պատմութեան համար, ափսոս է հրատարակել միջանկեալ էջերի ծնով. նոքա պէտք է լարուկ գրաւծների մէջ իրենց տեղը գտնեն և կամ ուղղակի հրատարակեն իբրև պարզ նիւթեր» (Երես Մուրճ անցեալ № 1, էջ 87, ձախ ս/ւնակ):

Նրբ Ա. Ն.-ն մեր գրածի դիմաց ուղղակի չափոնում է թէ «աչնինչ պ. Նրիցեանի գրաւծից փոխ առած կալ միմիա՛ն 16 էջ, 70—94»—նա կատարեալապէս դանց է առնում աչն շարժառիթը, որով մենք լինել էինք Արիստակէս եպիսկոպոսի գրքի 51—70 էջերը և տեղիք է տալիս ընթերցողին կարծելու, թէ մենք անհիմն կերպով լիշատակած լինենք ալդ 20 էջերը և փնաս գրախօսւած գրքի:

Արտատպումը, մեր գրախօսականի համեմատ, հասկացում էր գրքի էջ 70—102: Ա. Ն.-ն շտկում է՝ «70—94»: Ստուգելով գրաւծը որ ալդ ճիշդ է, թէն չենք կարող երաշխաւոր լինել, թէ ալդ 25 էջերում իսկական արտատպւածը «16 էջ» է և ոչ աւելի: Անուամենայնիւ թերեւ աւելորդ չէ աւելցնել, որ Ա. Ն.-ն էջերի թիւը հաշւելով հաշի չի առել չորս երեսի մի զոկումէնոր (էջ 80-83), որ Արիստ. եպիսկոպոսի գրքում բնագրով է առաջ բերւած, իսկ Նրիցեանի գրքում թարգմանաբար:

Այս կէտին վերջ տալուց առաջ ընթերցողներին ուշադրութիւնն ենք հրաւիրում հետեւեալ հանգամանքի վրա. հեղինակը, իւր գրքի 70-րդ էջում չափոնում է՝ «...վասնորոյ օգտւում ենք պ. Աղ. Նրիցեանի զնահատելի աշխատութիւնից», և ծանօթութեան մէջ դնում աղբիւրը աւսպէս. «Ամենաչն Հալոց կաթողիկոսութիւնը և ալլն մասն բ. եր. 183—228»: Հեղինակը իւր ալդ խօսքերով կամեցել է չափոնել թէ ինչ որ աչնուհետև պատմելու է՝ Նրիցեանի գրքից է լինելու: Բայց արտատպութեան ձևով է լինելու ալդ, թէ ոչ՝—ալդ խնդիրը նա թողնում է անորոշ ընթերցողի համար. չակերտներ նա տնում է միաչն զոկումէնոսների սկզբում և վերջում, և ընթերցողը անորոշութեան մէջ է փնում թէ արդեօք զոկումէնոսներից զուրս տողերը ումն են: Յետոյ, օգտուելը Նրիցեանից հասնում է 79-րդ էջին, և 80-երորդից սկսւում է մի զոկումէնոր, որի համար դրած է աչս ծանօթութիւնը՝ «Թուղթը խոնաւութիւնից փրած լինելով՝ տեղ-տեղ փշուել է»: Բայց թէ դա էլ Նրիցեանի գրքից է թէ ոչ՝—ալդ նա չի չափոնում. և հարկ կը լինի հեղինակի միջամտութիւնը, որ պարզւի թէ ալդ զոկումէնորը հեղինակի սեփական աղբիւրից է:—Բայց դեռ չպրծանք: Ալդ սեփական զոկումէնոսից ձեռոյ շարունակւում է պատմութիւնը դարձեալ անչակերտ և չակերտաւոր

տողերով մինչև էջ 94-ի կէտը։ Ումն են պատկանում գէթ չակերտաւոր դոկումէնտները—ոչ մի խօսք ալդ մասին։ Բանից դուրս է գալիս որ ղոթա շարունակութիւն են Նրիցեանից արած քաղաժների։ Բաւց ալդ կը հասկանաւ միայն երկու գիրքը իրար հետ համեմատողը, որը կարող է չաջողութեամբ վերջացնել իւր ալդ անշահ գործը գիշեր լուսացնելով։ Սոսկ ընթերցողը ալդ չի կարող իմանալ—Բաւց դարձեալ չպրծանք, որովհետեւ էջ 94-ի կէսից շարունակուում է պատմութիւնը անշակերտ տողերով մինչև էջ 95-ը, որից արդէն սկսուում է մի դոկումէնտ որ տեսում է մինչև էջ 100-ի կէտը։ Եւ դարձեալ ոչ մի ծանօթութիւն ալդ մասին. ու ընթերցողը կարարեալ անլուրջութեան մէջ է թէ արդեօք ալդ դոկումէնտը ստիպական է թէ շարունակութիւն է Նրիցեանից արած փոխառումներին։ Դարձեալ ուրեմն պէտք է դիմել Նրիցեանի գրքին ու ժամերով որոնել թէ աւետեղ կան արդեօք ալդ դոկումէնտը թէ ոչ։ Մի գրախօսից արդէն չափից դուրս շատ չի պահանջուում արդեօք, երբ նորան դատապարտել են ուզում անվերջ պրպտումների՝ հասկանալու համար արն, ինչ գրքի հեղինակի պարտքն է պարզած դնել ընթերցողներին առջև։

Եւրոպացին վաղուց վճռել է ալդ տեսնիկական խնդիրը, չափնելով որ ծանօթութիւն պէտք է դնել ումն անգամ մի քաղաժք անելիս, ցոյց տալով աղբիւրը (գրքի անունը, էջը). և երբ ալդ կանոնը չի պահպանւած սխտեմական կերպով՝ գրախօսը պիտի տրտնջաւ հեղինակից դորան վերաբերեալ որ և է սխալմունքի համար, և ոչ թէ ընդհակառակը։

Կէտ 2. Արիստակէս Ալթունճեանցի մասին ալ աղբիւր ունեցած չլինելով՝ ընդունում ենք որ նա աշխարհական է մնացել, և ալժմ չենք կարող մատնանի լինել ալն տողը որը մեզ առիթ է տել կարծելու թէ նա ձեռնադրւած է եղել։ Նրեի մեզ սխալեցնողը ալն հանգամանքն է եղել որ Արիստակէսը Պոլիս և ապա Զմիւռնիա զրկեց ուսում ստանալու և ապա ձեռնադրուելու չուսով։ Ալդ կէտը չամենալն դէպս զուրկ է կարեորութիւնից։

Կէտ 3. Թաղիադեանցի առիթով Ա. Ն. ն վերաբողոքում է իւր գրքի մէջ գրածը ալապէս՝ «244 երեսում մենք միայն ալս ենք ասել թէ ալս (==Հնդկաստանից) վերադալ ձից չետու Մեսրովը (=Թաղիադեանց) որքան ժամանակ է մնացել Էջմիածնում և երբ է հեռացել—չգիտենք»։ Եւ դորանից չետու Ա. Ն. ն մեզ հարց է տալիս՝ «միթէ ալս տողերից կարելի է եղրակացնել թէ մենք կարծում ենք, որ Թաղիադեանցն Էջմիածնից 1832 թւին ուղղակի Հնդկաստան է վերադարձել»։ Մենք ստորագծեցինք միայն խօսքը, որովհետեւ Արիստակէս Կալսկոպոսի ալն տողերից արդարեւ հրէշաւոր բան կը լինէր եղրակացնել, թէ հեղինակի կարծիքով Թաղիադեանցը ուղիղ Հնդկաստան գնաց։ Եւ ինչու ոչ Զինաստան։ Տպաւորութիւնը բոլորովին ալ կը լինէր, սակաւն, և թէ Ա. Ն. ն հեղութիւն կրած ու մի քանի տող էլ շարունակած լինէր իւր գրքից քաղաժքը. և ընթերցողը կը կարգար հետեւալը։

«Թէ ալս վերադարձից չեղող Մեսրովըը (==Թաղիաղեանց) որ-
քան ժամանակ է մնացել էջմիածնում և երբ է հեռացել—
չգիտենք. ունինք նորա մի նամակն ևս առ Ներսէս Կաթողի-
կոս, գրած Կալկաթալից (==Հնդկաստանում) 1846 թ. հոկտ.
25-ին, որով ողնութիւն է խնդրում հայրապետից...»

Եւ ահա ալս տողերից մենք կարելի ենք համարել եղբակայնել «Թէ
հեղինակը կարծում է որ Թաղիաղեանցը «նորից ուղղակի Հնդկաստան
վերադարձաւ», քանի որ հեղինակը էջմիածնից հեռանալու ժամանակի
մասին անպատասխան հարց տալուց անմիջապէս չեղող վիշտակում է Ներ-
սէս Կաթողիկոսի Հնդկաստանից Թաղիաղեանցի գրած նամակ ստանալը
1846 թւին. ապէ մէկ Խնկարի ունեցէք, ալժամ որ Թաղիաղեանցին ճշիւ-
ւած է 15 երես (էջ 231—246), ուր վիշւած է նորա Երևան, էջմիածին,
Հաղպատ, Թիֆլիս, Շուշի, Հնդկաստանի մի քանի քաղաքներում եղած
լինելը, և ոչ մի անգամ չի վիշտակում նորա եղած լինելը Կ. Պոլսում.
Ահա ինչու անպատեհ համարեցինք մեր գրախօսականի մէջ չիշեցնել թէ
գրքի հեղինակին և թէ միաժամանակ մեր ընթերցողներին, որ Թաղիա-
ղեանցը նախքան Հնդկաստան վերադառնալը՝ Կ. Պոլսում եղաւ, ուր նա
ուսուցչութեամբ պարապեց. Ալդ երկու խոյ երրորդը ահա.

Մեր չիշեցրած իրողութիւնը աւելորդ չպիտի համարէր գրքի հեղի-
նակը նամանաւանդ, որ դորանով մի յայտնի չափով լուծումն էր ստանում
նորա տած հարցը՝ թէ երբ է հեռացել Թաղիաղեանցը էջմիածնից՝ 1832-ից
չեղող Քննադատութեան մէջ ընդունւած մեթոդի համաձայն, երբ մի հե-
ղինակ չգիտէ ճշտութեամբ մի եղելութեան ժամանակը, ապա նա պիտի
աշխարհի գէթ ժամանակի մերձուոր սահմանները որոշելը երբ 1832-ից չեղող
միայն 1846 թւականն է վիշոււմ,—դորանով տեղիք է տրոււմ ընդունելու որ
չիշեալ անձը հեռացաւ էջմիածնից ոչ աւելի ուշ քան մինչև ալդ տարին. բայց
երբ չիշեցնում ենք նորա եղած լինելը Կ. Պոլսում Ստեփանոս Աղաւնիի ժա-
մանակ, որը պատրիարք էր մինչև 1839 թւականը, ուրեմն հարցը լուծելու
համար մենք շահում ենք արդէն եօթ տարի, քանի որ անորոշ ժամանա-
կամիջոցը փոխանակ 1832-ից մինչև 1846-ը երկարացնելու, ալժամ կ'ընդու-
նենք իբրև հաստատ՝ 1832-ից մինչև 1839-ը. Ալժամ բանից երևում է որ,
հալը Մկրեանի ասելով, Թաղիաղեանցը եկած է եղել Կ. Պոլիս 1838-ի
մալխին. դարձեալ մի տարի վատրակ. նոյնից իմանում ենք թէ նա Կ.
Պոլիս գալուց առաջ Նոր-Ջուղա է եղել—դարձեալ առնալով մի տարի
վատրակ, որովհետեւ էջմիածնից Նոր-Ջուղա գնալը, աչտեղ մի առժամա-
նակ մնալը և աչտեղից Կ. Պոլիս հասնելը կը պահանջէր առնալով մի
տարի. ախպիրսով իջանք 1836 թւականը. և ահա անորոշ հարցը սահ-
մանափակւած 1833-ի և 1836-ի միջերբը. փոխանակ, ուրեմն, ասելով՝
«Երբ է հեռացել—չգիտենք», ինչպէս Արիստակէս եպիսկոպոսն է անում,—
մինք կ'ասէինք՝ «հեռացել է 1833-ի և 1836-ի միջերբը»:

Սակալն կանգ առնենք. ալսքանը աւելի քան բաւական է ցոյց տալու համար որ Արիստակէս եպ. Սեղրակեանին վերագրած կարծիքը մենք դուրս ենք բերել ոչ թէ բռնազգթօսիկ կերպով, այլ լաւ կ'աւելուց չեղով: Յոց տւինք նաեւ, որ մի տեղեկութիւն աւելցնելով Արիստակէս եպիսկոպոսի տաճի վրա՝ մենք մի աւելորդ բան չենք արել, քանի որ ալդ տեղեկութիւնով մի չափոնի չափ պարզուում է աճն հարցը, որ Արիստակէս սրբազանը դնում է իւր գրքի մէջ, բայց որին ինքը միայն «չգիտենք»-ով է պարտախանում: Մենք զգուշութիւնը դեռ աւելի հեռուն էլ ենք տարել գրելով՝ Արիստ. եպ. Սեղրակեանի գրքի ալս ինչ տողերից «կարելի է եղրակացնել թէ հեղինակը կարծում է որ...», ասել է թէ մեզ նման ամեն մի ընթերցող կարող է ալդ նոյնը եղրակացնել: Նոյն թէ Արիստակէս եպիսկոպոսը գիտէր արդեօք մեր հաղորդած տեղեկութիւնը բաց հարկ չի դարձել վիշելու, թէ չգիտէր—ալդ մենք դուշակել չէինք կարող. ըստ մեզ՝ սխալ է գործել որ չի չ'չել, եթէ միայն գիտէր. բայց մեր գործը չէր գրքի սահմանից դուրս՝ հետամուտ լինել հեղինակին. գրախօսի համար գրքում տպածն է քննութեան առարկան:

Ա. Ե-ի ալդ նոյն կէտ 3-րդի աւրթով կարող ենք ասել, որ մեր տեղեկութեան համար Թաղիադեանցի Կ. Պօլիս եղած լինելու մասին Յովհաննէս քահանայ Մկրեանի կաղմած կենսագրութիւնը չէ աղբիւր ծագւել, և ալդ պարտաւոր մենք չենք ամղանշած և աղբիւրի դէմ. որպէս ի չենք մեղանշած հեղինակի գրածի դէմ. ալ, ընդհակառէ, շատ հաւատարիմ ենք մնացած՝ մեր ունեցած թէն ոչ լրակատար և պարտաւոր աղբիւրին: Ուրախ կը լինէինք եթէ վիշեալ կենսագրութիւնը մեր ձեռքի տակ եղած լինէր. աճն ժամանակ մեր տեղեկութիւնը աւելի ևս լրակատար կը լինէր:

Ա. Ա.